Հաստատված է
Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝
.....................................
(ստորագրություն)
....................................
(ամիս ամսաթիվ)

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

| | | |
|---|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | | Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք |
| | | |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ | | |
| | | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | | Իրավագիտություն, վճարովի ուսուցում |
| | | |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | Իրավագիտություն |
| | | |
| ԱՄԲԻՈՆ | | Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն<br>E-mail: pitambion@mail.ru |
| | | |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | | Ա.Սաֆարյան<br>E-mail: safamalya@mail.ru, հեռ. 093 57 75 89 |
| | | |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | | 3-րդ կուրս, 1-ին կիսամյակ |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | | բակալավր |

| | | |
|---|---|---|
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | | 4(չորս) |
| | | |
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ | | «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը |

| | | |
|---|---|---|
| **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ** | | կազմում է 120 ժամ, որից 36 ժամ դասախոսություն, 28 ժամ սեմինար պարապմունք, 56 ժամ ինքնուրույն աշխատանք:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը չորս լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով: |
| | | |
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» «ՀՀ սահմանադրական իրավունք» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| **ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** | | «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես իրավունքի ճյուղ,արտասահմանյան երկրների Սահմանադրությունները, սահմանադրական վերահսկողությունն, անհատի սահմանադրաիրավական կարգավիճակը, հասարակական կարգի սահմանադրաիրավական հիմունքները, քաղաքական և հասարակական կազմակերպությունների իրավական կարգավիճակը,պետության ձևի ինստիտուտի սահմանադրաիրավական հիմունքները,ընտրական իրավունքը և ընտրական համակարգը, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունները և տեղական ինքնակառավարումը |

| | | |
|---|---|---|
| | | արտասահմանյան երկրներում: |
| | | |
| **ՆՊԱՏԱԿ**<br><br>**ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի հասկացության, առարկայի, մեթոդների, համակարգի, արտասահմանյան երկրների սահմանադրությունների հասկացության, ձևի, կառուցվածքի, ընդունման և փոփոխման, սահմանադրական վերահսկողության հասկացության, օբյեկտների, տեսակների և մարմինների, արտերկրների իրավական համակարգերի և անձի իրավական դրության, քաղաքացիության ինստիտուտի, տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքների, քաղաքական և հասարակական կազմակերպությունների իրավական դրության, պետության կառավարման ձևի, կառուցվածքի, պետական ռեժիմի, ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացության, սկզբունքների, ընտրական գործընթացի, հանրաքվեի, պլեբեսցիտի, համաժողովրդական հարցման, պետական իշխանության մարմինների համակարգում պառլամենտի տեղի ու դերի, կառուցվածքի, պառամենտարիզմի, պառլամենտական լիազորությունների, օրենսդրական գործընթացի, պատգամավորի իրավական կարգավիճակի, գործադիր իշխանության հասկացության, դատական մարմինների և դատական համակարգերի, տեղական ինքնակառավարման ընդհանուր բնութագրի, հիմնական սկզբունքների, տեղական ինքնակառավարման մարմինների |

| | | |
|---|---|---|
| | | ձևավորման կարգի և լիազորությունների վերաբերյալ:<br><br>Դասընթացի խնդիրներն են`<br>• ներկայացնել արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սահմանադրաիրավական հարաբերությունները, ինստիտուտները,աղբյուրները,<br>• ուսումնասիրել արտասիմանյան երկրների սահմանադրությունները,<br>• սահմանել սահմանադրական վերահսկողության առաքելությունը,<br>• վեր հանել քաղաքացիության ինստիտուտի առանձնահատկությունները,<br>• ներկայացնել անհատի սահմամնադրաիրավական կարգավիճակը,<br>• ներկայացնել տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային հարաբերությունների սահամանադրաիրավական հիմունքների առանձնահատկությունները<br>• ներկայացնել քաղաքական և հասարակական կազմակերպությունների հասկացությունը,հատկանիշները ու տեսակները,<br>• ուսումնասիրել պետության ձևի հասկացությունը և տարրերը,<br>• ներկայացնել ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկլացությունը, ընտրական իրավունքի սկզբունքները,<br>• ուսումնասիրել օրենսդիր իշխանության դերը, կառուցվածքը, լիազորությունները,պատգամավորի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում,<br>• ներկայացնել արտասահմանյան երկրներում գործադիր իշխանության ընդհանուր բնութագիրը<br>• ներկայացնել դատական իշխանության հասկացությունը և դրա իրականացման առանձնահատկությունները |

| | | |
|---|---|---|
| | | • ներկայացնել արտասահմանյան երկրներում տեղական ինքնակառավարման ընդհանուր բնութագիրը, տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը և լիազորությունները: |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br>*Կարողանա՝* | | 1. սահմանել արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սահմանադրաիրավական հարաբերությունները, ինստիտուտները,և աղբյուրները<br>2. բացահայտել արտասհմանյան երկրների սահմանադրությունների էությունը և տեսակները<br>3. որոշել սահմանադրական վերահսկողության օբյեկտները, տեսակները և մարմինները արտասահմանյան երկրներում<br>4. ներկայացնել անհատի սահմանադրաիրավական կարգավիճակը և քաղաքացիության ինստիտուտը արտասահմանյան երկրներում,<br>5. ներկայացնել սահմանադրական կարգի հիմունքների տարրերը արտասահմանյան երկրներում<br>6. նշել քաղաքական և հասարակական կազմակերպությունների տարբերությունները արտասահմանայան երկրներում,<br>7. սահմանել պետության ձևի հասկացությունը արտասահմանյան երկրներում<br>8. սահմանել ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը, վերլուծել ընտրական գործընթացը արտասահմանյան երկրներում<br>9. ներկայացնել օրենսդիր իշխանության դերը, կառուցվածքը, լիազորությունները, պառլամենտի |

| | | |
|---|---|---|
| | | աշխատանքի կարգը արտասահմանյան երկրներում<br>10. Ներկայացնել գործադիր իշխանության ընդհանուր բնութագիրը, պետության գլուխը և կառավարությունը արտասահմանյան երկրներում,<br>11. Ներկայացնել դատական իշխանության ընդհանուր բնութագիրը, դատական մարմինները և դատական համակարգերը, դատական իշխանության իրականացումը արտասահմանյան երկրներում,<br>12. Ներկայացնել տեղական ինքնակառավարման ընդհանուր բնութագիրը և հիմնական սկզբունքները, տեղական ինքնակառավարման ձևավորման կարգը և լիազորությունները արտասահմանյան երկրներում |

| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| | | |
| **Հիմնական** | | 1. Մուրադյան Մ. Հ. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք /ուսումնական ձեռնարկ բուհերի համար. Եր., 2011<br>2. Автономов А.С. Веденеев Ю.А. Луговой В.В. Сравнительное избирательное право: уч. пособие //. под научной ред. В.В. Маклакова. - М., 2003.<br>3. Авакьян С.А. Проблемы народного представительства в РФ.- М.,1998. – 399 с<br>4. Арутюнян А.Ш. Правительство и выборы.- Ереван: Издательство «Государственная служба», 1996. – 70 с.<br>5. Барабашева Г.В. Мишин А.А. Государственное право буржуазных и развиваюшихся стран.- М., 1989.<br>6. Всеобщая Декларация прав человека // Международная защита прав и свобод человека.- М., 1990.<br>7. Декларация о критериях свободных и справедливых выборов. // Международные акты о правах человека. // Сборник документов. -М.: Издательская группа НОРМА – ИНФРА, 1998. – 784 с.<br>8. Европейская хартия о местном самоуправлении. // Международные акты о правах человека. // Сборник документов. - М.: Издательская группа НОРМА – ИНФРА, 1998.<br>9. Европейская хартия о местном самоуправлении. // Международные акты о правах человека. // Сборник документов. -М.: Издательская группа НОРМА – ИНФРА, 1998. – 784 с.<br>10. Институты конституционного право иностранных государств. Выборы парламента и президента. / Отв. ред. д.ю.н. Д.А.Ковачев.- М.: «Городец - издат», 2002. |

| | | |
|---|---|---|
| | | |
| Լրացուցիչ | | 1. Карташкин В.А. Лукашева Е.А. Международные акты о правах человека./ Сборник документов. - М.: Издательская группа НОРМА – ИНФРА, 1998.<br>2. Конвенция о стандартах демократических выборов, избирательных прав и свобод в государствах – участниках СНГ // Вестник ЦИК-а РФ. 2003. № 9 (147).<br>3. Конвенция о политических правах женщин. // Международные акты о правах человека. // Сборник документов. -М.: Издательская группа НОРМА – ИНФРА, 1998. – 784 с.<br>4. Конституции государств входящих в Европейский Союз. - М.: Издательство НОРМА, 1996.<br>5. Конституции зарубежных государств: учеб. пособие.// сост. проф. В.В.Маклаков. 3-е изд., перераб. и доп. -М.: Издательство БЕК, 2002.<br>6. Конституционное право зарубежных стран. / под общ. ред. М.В. Баглая, Б.И.Лейба, Л.М.Энтина. - М.: Издательство НОРМА, 2008.<br>7. Конституционное право зарубежных стран. / под ред. А.В. Земцова. -М., 1990.<br>8. Конституционное право зарубежных стран. // Под. ред. Б.А.Страшуна.- М.: Издательство БЕК, 1996. Том 3. |
| | | |

| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ | | Քննություն |
|---|---|---|
| | | |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:<br>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է |

| | | |
|---|---|---|
| | | ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները: |
| | | |
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին: |
| **Ներկայություն**<br><br>**Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ**<br><br>**Ինքնուրույն և** | | Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |

| | | |
|---|---|---|
| **գործնական աշխատանքներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| | | Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| **Թեմա 1**<br>**Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես իրավունքի ճյուղ, գիտություն և ուսումնական դասընթաց**<br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես իրավունքի ճյուղ<br>2. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի գիտությունը<br>3. արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես ուսումնական դասընթաց | Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն` սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br>Հարց 2-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողնեերը ծանոթանում են գրականությանը և առանձնացնում արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես գիտություն և որպես ուսումնական դասընթաց<br>Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սահմանադրաիրավական հարաբերությունները, սուբյեկտները, աղբյուրները և քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները: |

| **Թեմա 2**<br>**Արտասահմանյան երկրների Սահմանադրությունները**<br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար պարապունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Սահմանադրության հասկացությունը և էությունը | Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1,4 – ինքնուրույն |

| | |
|---|---|
| 2. Սահմանադրության ձևը և կառուցվածքը<br>3. Սահմանադրության ընդունումը,փոփոխումը<br>4. Սահմանադրությունների դասակարգումը | աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ առանձին պետությունների սահամանդրությունների օրինակով ներկայացնելով Սահմանադրությունների դասակարգումը:<br>Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են սահմանադրություն տերմինը, արտասահմանյան երկրների սահմանադրությունների հատկանիշները, ֆունկցիաները, ձևը, կառուցվածքը, սահմանադրության գործողությունը, ընդունումը և փոփոխումը, սահմանադրությունների դասակարգումը:<br>Սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները: |

| **Թեմա 3**<br>**Սահմանադրական վերահսկողությունն արտասահմանյան երկրներում**<br>**(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Սահմանադրական վերահսկողության հասկացությունը<br>2. Սահմանադրական վերահսկողության օբյեկտները<br>3. Սահմանադրական վերահսկողության տեսակները | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը, և ըստ խմբերին նախապես տրված |

| | |
|---|---|
| 4. Սահմանադրական վերահսկողության մարմինները | հանձնարարության դասախոսին ներկայացնում են օրենքի սահմանադրականության հարցի որոշման պատմական փուլերը և սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմիններ ունեցող պետությունները: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները, կատարվում է դրանց խմբային քննարկում: Կատարվում է սովորողների հարցում: |

**Թեմա 4**
**Անհատի սահմանադրաիրավական կարգավիճակը արտասահմանյան երկրներում**
**(4ժամ դասախոսություն,2ժամ սեմինար պարապմունք)**

| Թեմայի հարցեր | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Արտերկրների իրավական համակարգերը և անձի իրավական դրությունը<br>2. Քաղաքացիության ինստիտուտը<br>3. Մարդու և քաղաքացու քաղաքացիական, քաղաքական և տնտեսական ու սոցիալ-մշակութային իրավունքներ, ազատություններ և պարտականություններ<br>4. Մարդու իրավունքները և ազատությունները արտակարգ իրավիճակի պայմաններում | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարերց 3-4 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում մատուցված նյութը: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները,կատավում է նրանց գիտելիքների ստուգում հարցման միջոցով: |

**Թեմա 5**
**Հասարակական կարգի սահմանադրաիրավական հիմունքները**

| **արտասահմանյան երկրներում<br>(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հասարակական կարգի հասկացությունը<br>2.Տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները<br>3.Սոցիալական հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները<br>4.Քաղաքական հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները<br>5.Հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 2-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում մատուցված նյութը:<br>Հարցեր 1-5. Սեմինար պարապմունք: Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում՝ հարցման եղանակով: Դասախոսի կողմից ներկայացված իրավական եզրույթների ուսումնասիրման արդյունքում սովորողները որոշում են տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները: |

| **Թեմա 6<br>Քաղաքական կուսակցությունների,հասարակական կազմակերպությունների և շարժումների կազմակերպման ու գործունեության իրավական կարգավորումը արտասահմանյան երկրներում<br>(4ժամ դասախոսություն,2ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Հասարակական միավորումների իրավական կարգավորման հիմունքներն ու սահմանները<br>2. Քաղաքական կուսակցությունների իրավական դրությունը<br>3. Սոցիալ-տնտեսական և մշակութային բնույթի միավորումների իրավական դրությունը | Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարց 3- ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին՝ բերելով սոցիալ-տնտեսական և |

| | |
|---|---|
| | մշակութային բնույթի միավորումների օրինակներ:<br>Հարցեր 1-2 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հասարակական և քաղաքական կազմակերպությունների հասկացությունը և տեսակները, կատարվում է դրանց խմբային քննարկում: |

| **Թեմա 7<br>Պետության ձևի ինստիտուտի սահմանադրաիրավական հիմունքները արտասահմանյան երկրներում<br>(6ժամ դասախոսություն, 4ժամ սեմինար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Պետության ձևի և կառավարման ձևի հասկացությունը<br>2. Պետության կառավարման միապետական ձև<br>3. Պետության կառավարման հանրապետական ձև<br>4. Պետության տարածքային-քաղաքական կառուցվածքի ձևի հասկացությունը և էությունը<br>5. Ունիտար պետություն<br>6. Ինքնավարություն (ավտոնոմիա)<br>7. Դաշնություն (ֆեդերացիա)<br>8. Համադաշնություններ (կոնֆեդերացիաներ), համագործակցություններ, քաղաքական, տարածքային այլ կազմավորումներ<br>9. Պետական ռեժիմի հասկացությունը<br>10. Պետական ռեժիմի տեսակները | Հարցեր 1-10 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 6,8 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը և յուրացնում մատուցված նյութը:<br>Հարցեր 1-10: Սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են թեման, ինչպես նաև կազմակերպվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

| **Թեմա 8<br>Ընտրական իրավունքը և ընտրական համակարգը արտասահմանյան երկրներում<br>(2ժամ դասախոսություն, 2ժամ սիմնար պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1.Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 2-3 - ինքնուրույն |

| | |
|---|---|
| 2. Ընտրական իրավունքի սկզբունքները<br>3. Ընտրական գործընթաց<br>4. Հանրաքվե, պլեբեսցիտ, համաժողովրդական հարցում | աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:<br>Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: |

**Թեմա 9**
**Օրենսդիր իշխանությունն արտասահմանյան երկրներում**
**(4ժամ դասախոսություն, 4ժամ սեմինար պարապմունք)**

| Թեմայի հարցեր | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Պառլամենտի տեղն ու դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում: Պառլամենտ և պառլամենտարիզմ<br>2. Պառլամենտի կառուցվածքը<br>3. Պառլամենտական լիազորությունները: Պառլամենտական վերահսկողություն<br>4. Պառլամենտի աշխատանքի կարգը: Օրենսդրական վարույթ<br>5. Պատգամավորի իրավական կարգավիճակը | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 3,5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:<br>Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: |

**Թեմա 10**
**Գործադիր իշխանությունն արտասահմանյան երկրներում**
**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար պարապմունք)**

| Թեմայի հարցեր | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Գործադիր իշխանության ընդհանուր բնութագիրը | Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: |

| | |
|---|---|
| 2. Պետության գլուխ<br>3. Կառավարություն | Հարց 2 – ինքնուրույն աշխատանք: Սովորողները ուսումնասիրում են տեսական գրականությունը՝ շեշտադրում կատարելով պետության գլխի իրավական կարգավիճակի տարանջատման չափանիշի վրա:<br>Հարցեր 1-3. Սեմինար պարապմունք. Կատարվում է սովորողների հարցում, պարզաբանվում են անհասկանալի մնացած հարցերը: |

**Թեմա 11**
**Դատական իշխանությունն արտասահմանյան երկրներում**
**(4ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար պարապմունք)**

| Թեմայի հարցեր | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Դատական իշխանության հասկացությունը<br>2. Դատական մարմիններ և դատական համակարգեր<br>3. Դատական իշխանության իրականացումը | Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, անհասկանալի մնացած հարցերը ներկայացվում են դասախոսին:<br>Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: |

**Թեմա 13**
**Տեղական ինքնակառավարումը արտասահմանյան երկրներում**
**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար պարապմունք)**

| Թեմայի հարցեր | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Տեղական ինքնակառավարման ընդհանուր բնութագիրը և հիմնական սկզբունքները | Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 2-3 - ինքնուրույն |

| | |
|---|---|
| 2. Տեղական ինքնակառավարման համակարգերը<br>3. Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը<br>4. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները | աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, անհասկանալի մնացած հարցերը ներկայացվում են դասախոսին:<br>Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը: |

## Հարցաշար

## «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» առարկայի քննության

1. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես իրավունքի ճյուղ
2. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի գիտությունը
3. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքը որպես ուսումնական դասընթաց
4. Սահմանադրության հասկացությունը և էությունը
5. Սահմանադրության ձևը և կառուցվածքը
6. Սահմանադրության ընդունումը,փոփոխումը
7. Սահմանադրությունների դասակարգումը
8. Սահմանադրական վերահսկողության հասկացությունը
9. Սահմանադրական վերահսկողության օբյեկտները
10. Սահմանադրական վերահսկողության տեսակները
11. Սահմանադրական վերահսկողության մարմինները
12. Արտերկրների իրավական համակարգերը և անձի իրավական դրությունը
13. Քաղաքացիության ինստիտուտը
14. Մարդու և քաղաքացու քաղաքացիական, քաղաքական և տնտեսական ու սոցիալ-մշակութային իրավունքներ, ազատություններ և պարտականություններ
15. Մարդու իրավունքները և ազատությունները արտակարգ իրավիճակի պայմաններում
16. Հասարակական կարգի հասկացությունը
17. Տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները
18. Սոցիալական հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները
19. Քաղաքական հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները
20. Հոգևոր-մշակութային հարաբերությունների սահմանադրաիրավական հիմունքները
21. Հասարակական միավորումների իրավական կարգավորման հիմունքներն ու սահմանները
22. Քաղաքական կուսակցությունների իրավական դրությունը
23. Սոցիալ-տնտեսական և մշակութային բնույթի միավորումների իրավական դրությունը
24. Պետության ձևի և կառավարման ձևի հասկացությունը
25. Պետության կառավարման միապետական ձև
26. Պետության կառավարման հանրապետական ձև
27. Պետության տարածքային-քաղաքական կառուցվածքի ձևի հասկացությունը և էությունը
28. Ունիտար պետություն
29. Ինքնավարություն (ավտոնոմիա)
30. Դաշնություն (ֆեդերացիա)
31. Համադաշնություններ (կոնֆեդերացիաներ), համագործակցություններ, քաղաքական, տարածքային այլ կազմավորումներ
32. Պետական ռեժիմի հասկացությունը

33. Պետական ռեժիմի տեսակները
34. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի հասկացությունը
35. Ընտրական իրավունքի սկզբունքները
36. Ընտրական գործընթաց
37. Յանրաքվե,պլեյբեսցիտ,համաժողովրդական հարցում
38. Պառլամենտի տեղն ու դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում:Պառլամենտ և պառլամենտարիզմ
39. Պառլամենտի կառուցվածքը
40. Պառլամենտական լիազորությունները: Պառլամենտական վերահսկողություն
41. Պառլամենտի աշխատանքի կարգը:Օրենսդրական վարույթ
42. Պատգամավորի իրավական կարգավիճակը
43. Գործադիր իշխանության ընդհանուր բնութագիրը
44. Պետության գլուխ
45. Կառավարություն
46. Դատական իշխանության հասկացությունը
47. Դատական մարմիններ և դատական համակարգեր
48. Դատական իշխանության իրականացումը
49. Տեղական ինքնակառավարման ընդհանուր բնութագիրը և հիմնական սկզբունքները
50. Տեղական ինքնակառավարման համակարգերը
51. Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը
52. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները